ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

12 Նոյեմբերի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

156
(3006)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԸ ՄԻՆՉ ՔՊ ՄՏՆԵԼԸ ԲԵՌՆԱՏԱՐ Է ԳՆԵԼ

Բաց աղբյուրներում տեղադրված ինֆորմացիայի ուսումնասիրության արդյունքում «Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ «Թավշյա հեղափոխության» թեժ օրերին այսօրվա ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը բեռնատար մեքենա է գնել: Մինչ այդ փաստը մանրամասնելը տեղեկացնենք, որ Կոնջորյանը եզակի «չքայլած» հեղափոխականներից է, որը երիտասարդ տարիքում հասցրել է երեք կուսակցություն փոխել:

Կոնջորյանը «Հայաստանի ժողովրդավարական ազատական միություն» կուսակցության (ՀԺԱՄ) անդամ էր, որտեղից դուրս է եկել չբացատրված պատճառներով: Միայն հայտնի է, որ նա «Լուսավոր Հայաստան» կուսակցության անդամ էր, հասցրեց իր հարսանիքի քավոր դարձնել Էդմոն Մարուքյանին եւ քայլում էր դեպի լուսավոր ապագա: Այդ ճանապարհին նա, կարծես թե, այնքան էլ չէր հավատում իր քաղաքական ապագային, դրա համար, թերեւս, բեռնատար «Հունդայի» էր գնել, որպեսզի ինչոր գործունեություն ծավալեր: Բայց 2018-ից Կոնջորյանը նաեւ իր քավոր Էդմոն Մարուքյանի գլխավորած «Լուսավոր Հայաստան» կուսակցությունից էլ դուրս եկավ՝ տեղավորվելով իշխող թիմի ներսում: Եվ այդ ընթացքում նրա «բեռնատար» ավտոմեքենան 2022 թվականի հայտարարագրում դարձավ «մարդատար»: Ավելին՝ մարդատար ավտոմեքենան նա վաճառեց իր հարազատ եղբորը 3 միլիոն դրամով՝ նույն օրը եղբորից գնելով 9 միլիոն դրամ արժողության «Տոյոտա» մեքենան:

«Ժողովուրդ» օրաթերթը, իհարկե, փորձեց կապ հաստատել ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանի հետ՝ հասկանալու համար, թե հեղափոխության օրերին ինչ խառը առք-վաճառքով է նա զբաղված եղել, սակայն մեր զանգերը մնացին անպատասխան:

«Հեղափոխություն հանուն ՔՊ մերձակա խմբակի». այլ կերպ չի կարելի բնորոշել այն, ինչը արձանագրվում է թվերով, ավելի ճիշտ՝ թալանով, քանզի այդ բառը չարաշահելով, որպես լոզունգ օգտագործելով, Նիկոլ Փաշինյանն ու իր թիմը առ այսօր երկրում բարելավել են բացառապես սեփական բարեկեցությունը: ԱԺ ՔՊ-ական անհայտ մի պատգամավոր կա՝ Տիգրան Պարսիլյան: Նախկին շարքային քաղաքացի, որի կինը՝ Նվարդ Սարգսյանը Մասիս քաղաքի ավագանու անդամ է, միաժամանակ Երեւանի Մխիթար Սեբաստացու անվան դպրոցի աշխատակից: «Ժողովուրդ» օրաթերթը բաց աղբյուրներից տեղեկացավ, որ մինչ ՔՊ իշխանության գալը Նվարդ Սարգսյանը աշխատել եւ վարձատրվել է ինչպես շարքային քաղաքացի: Բայց մի քանի տարի անց տիկնոջ աշխատավարձը քառապատկվել է: «Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ 2022 թվականին 1.2 միլիոն դրամ աշխատավարձից պատգամավորի կնոջ աշխատավարձը 2023 թվականին դարձել է 4.9 միլիոն դրամ: Նույնպիսի թռիչքաձեւ աճ արձանագրվեց նաեւ ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանի կնոջ դեպքում: Նրա աշխատավարձը «Հայփոստ»-ում 2021-ին 6.8 միլիոն դրամ էր, 2022-ին՝ 9.5 միլիոն, իսկ 2023-ին՝ արդեն 10.5 միլիոն դրամ: Ի դեպ, Շուշան Ալեքսանյանի աշխատավարձը 6 անգամ գերազանցում է կազմակերպության 3064 աշխատակիցների միջին աշխատավարձը, որոնց տարեկան միջին աշխատավճարը 1.8 միլիոն դրամ է: Դժբախտ թոշակառուների մասին, թերեւս, ավելորդ է հիշատակել. նրանց թոշակն այս տարի եւս գեթ մեկ դրամով չի ավելանալու՝ «գումար չկա»: Բայց ՔՊ-ականների համար, փաստորեն, միշտ գումար կա:

«Ժողովուրդ» օրաթերթի իրազեկ աղբյուրները փոխանցում են, որ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունում ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանի պաշտոնանկության մասին քննարկումները դեռ շարունակվում են: Չնայած Անդրանիկ Քոչարյանի ջանքերին՝ թեման ամեն գնով փակելու, Փաշինյանի հետ լեզու գտնելու, այնուամենայնիվ ՔՊ-ականների մի մեծ խումբ լուրջ է տրամադրված նրա պաշտոնանկությունը գլուխ բերելու հարցում: Իշխանականները թեման դեռ փակ չեն համարում, մեծամասնությունը կողմ է Քոչարյանի պաշտոնանկությանը, սակայն սպասում են Նիկոլ Փաշինյանի որոշմանը, ով էլ իր հերթին շարունակում է այս թեմայով լռություն պահպանել ու դեռ վերջնական դիրքորոշում չի հայտնում: Ահա սա է պատճառը, որ հարցը դեռ առկախված է մնում: Ինչու առկախված, քանի որ հայտնի «ինքնաքննադատության նիստի» օրը, երբ ՔՊ-ականները հերթով մոտեցել են ամբիոնին եւ վատաբանել Անդրանիկ Քոչարյանին, Նիկոլ Փաշինյանը չի ընդդիմացել, լսել է մոտ 40 ներկաների դժգոհությունները, բարկացել, ասել, որ հարցը պետք է լուծվի խմբակցության մակարդակով. սակայն խմբակցության ղեկավարն ու քարտուղարը դեռ դրա վերաբերյալ համապատասխան «ՍՄՍ հաղորդագրություն» չեն ստացել: Հայկ Կոնջորյանն ու Արթուր Հովհաննիսյանը սպասում են, Անդրանիկ Քոչարյանից սարսափելով՝ չեն նախաձեռնում պաշտոնանկությունը առանց լրացուցիչ ճշտումների:



Առաջին կարգի մասնագետից մինչեւ վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ. այսպես է սկսվել Նիկոլ Փաշինյանի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի տեղակալ Սարգիս Թորոսյանի կենսագրությունը: Մինչեւ 2018 թվականի հեղափոխությունը Սարգիս Թորոսյանը շրջագայել է նախ առողջապահության նախարարությունում, հետո արդարադատության, ապա ՀՀ նախագահի աշխատակազմում ՀՀ 3-րդ նախագահ Սերժ Սարգսյանի օրոք: Ստացվում է, որ վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալը նախկին իշխանություններից է, որին մերժելով էլ ամրանում է ներկայիս իշխանությունը: Հեղափոխության տարում Թորոսյանը տեղափոխվեց կառավարություն եւ հասարակ վարչության պետից դարձավ կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ: Սարգիս Թորոսյանն իր՝ 2023 թվականի հաշվետու տարվա անշարժ գույքի, եկամուտների, շահերի եւ ծախսերի հայտարարագիրը ներկայացրել է մայիսի 31-ին, որից տեղեկանում ենք, որ նա 2017 թվականին գնման եղանակով Արաբկիր վարչական շրջանում ձեռք է բերել բնակարան բազմաբնակարան շենքում եւ ավտոկայանատեղի: Անշարժ գույքը հաշվետու տարվա վերջում պահպանվել է: Հեղափոխությունից հետո՝ 2019 թվականին, Թորոսյանը որպես տրանսպորտային միջոց հայտարարագրել է 2011 թվականի արտադրության HYUNDAI մակնիշի ավտոմեքենա: Տրանսպորտային միջոցը հաշվետու տարվա վերջում պահպանվել է:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԶՐՈՒՅՑ

ԻՆՉՊԵՍ ԿԸՀ-Ն ԿԱՐՁԱԳԱՆՔԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ԵՄ անդամակցության հանրաքվեի դահանջով անհրաժեշտ 60 հազար ստորագրությունը հավաքվել է. այն արդեն հանձնվել է ԿԸՀ:

ԿԸՀ-ն պետք է ստուգի ստորագրությունները, որից հետո ստորագրահավաք նախաձեռնողները դրանք պետք է հանձնեն ԱԺ:

Ի՞նչ է սպասվում հաջորդիվ:

Թեմայի վերաբերյալ զրուցել ենք Հայաստանի «Եվրոպական» կուսակցության ղեկավար Տիգրան Խզմալյանի հետ:

-Պարոն Խզմալյան, փաստաթղթերն արդեն հանձնել եք կենտրոնական ընտրական հանձնաժողով, ի՞նչ է սպասվում հաջորդիվ, ե՞րբ պատրաստ կլինի պատասխանը:

-Ստորագրությունները մեկ շաբաթից ավելի է ինչ ԿԸՀ-ում են: Մենք սպասում ենք՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովը ստուգի մեր փոխանցած ստորագրությունների իսկությունը, վավերացնի, վերադարձնի մեզ, որպեսզի այն հանձնենք Ազգային ժողով:

-Իսկ ինչքա՞ն ժամանակ է հարկավոր, որպեսզի ԿԸՀ-ն արձագանքի:

-Մեզ դժվարացան հստակ թիվ ասել, սակայն մոտավորապես 2 շաբաթ են ժամկետները: Ստորագրությունները թեպետ էլեկտրոնային ենք ներկայացրել, բայց դրանց ստուգումը որոշակի ժամանակ կպահանջի:

-Այսինքն՝ հավանաբար մինչեւ այս ամսվա վերջ ստորագրությունները կհանձնվե՞ն ԱԺ:

-Ամենայն հավանականությամբ մինչեւ նոյեմբերի վերջ մենք կունենանք այն:

-Պարոն Խզմալյան, Ազգային ժողովից ի՞նչ սպասումներ ունեք, քանի որ իշխանությունները այդքան էլ տրամադրված չեն ԵՄ անդամակցության հանրաքվե անելու: Որպես նախաձեռնող՝ ի՞նչ կասեք:

-Իշխանությունները չէին թաքցնում իրենց դժգոհությունը: Նրանք մեր այս նախաձեռնությունը արկածախնդրություն էին համարում, համարում էին ազգային ազատագրական պայքար, չգիտես ինչու՝ հեգնանքով: Այնպես որ, ես չգիտեմ՝ որքանով է պաշտոնական անհամաձայնության այդ տեսակետը, բայց այն կիսում են ՔՊ անդամ պատգամավորները:

Երկու դաշինքները, որոնք որպես ընդդիմություն են ներկայանում, ռուսական գործակալներ են եւ ակնհայտորեն դեմ կլինեն:

Եթե դեմ լինեն ինչպես իշխանությունները, ապա ինքնըստինքյան կփաստվի այն միտքը, որ իշխանության եւ ընդդիմության միջեւ գաղափարական տարբերություն չկա: Իսկ եթե օգտագործեն այն հնարավորությունը, որը ընձեռել ենք, ապա կգործեն ավելի հստակ:

Մենք ձգտում ենք որոշակիության եւ հստակության:

-Պարոն Խզմալյան, եթե ամեն դեպքում այնպես լինի, որ իշխանականները դեմ քվեարկեն, եւ կարիք լինի 300.000 ստորագրության, ի՞նչ կանեք:

-Մենք 60.000 քաղաքացիների քվեները ջուրը չենք գցի: Ի սկզբանե նշել էինք, որ մինչեւ վերջ գնալու ենք մեր նպատակի համար, եւ այդպես էլ կանենք:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ՀՅՈՒՐԱՆՈՑԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿՑԻՑ՝ ՄԻՆՉԵՎ ՊՊԾ ՊԵՏ

2024 թվականի մարտի 4-ին ՀՀ վարչապետի որոշմամբ Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության պետ նշանակվեց Արթուր Գասպարյանը, ով նախկինում եղել է «Մետրոպոլ» ՍՊԸ-ին պատկանող Մետրոպոլ հյուրանոցի անվտանգության աշխատակից:

2005 թվականից մինչեւ 2023 թվականը ծառայել է ՀՀ ազգային անվտանգության մարմինների պետական պահպանության ծառայությունում եւ զբաղեցրել սպայից մինչեւ գնդի հրամանատարի պաշտոնները: 2023 թվականի մայիսի 2-ից ստանձնել է ՀՀ պետական պահպանության ծառայության պետի տեղակալի պաշտոնը, ապա սեպտեմբերի 9-ից պետի պարտականությունները կատարող, իսկ 2024 թվականի մարտի 4-ից՝ ՊՊԾ պետ:

Իսկ ինչ է հայտարարագրել 2024 թվականի համար իր՝ 2023 թվականի եկամուտների, անշարժ գույքի, ծախսերի եւ շահերի հայտարարագրում Արթուր Գասպարյանը:

Գասպարյանը հայտարարագիր ներկայացրել է որպես ՊՊԾ պետի տեղակալ:

Որպես տվյալ տարվա սկզբում առկա անշարժ գույք ՊՊԾ այժմյան պետը հայտարարագրել է 2 բնակարան, բազմաբնակարան շենքում բաժնային եւ միանձնյա սեփականության իրավունքով: Հայտարարագրել է մեկ ավտոտնակ Երեւանում եւ 2 հողամաս Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքում: 2023 թվականի ընթացքում ՊՊԾ պետը որեւէ գույք չի հայտարարագրել:

Որպես տվյալ տարվա սկզբում առկա տրանսպորտի միջոց Արթուր Գասպարյանը հայտարարագրել է MITSUBISHI մակնիշի մեքենա 2002 թվականի արտադրության, որը ձեռք է բերվել 2017 թվականին:

ՊՊԾ պետի կանխիկ դրամական միջոցները 2023 թվականի հայտարարագրի համաձայն կազմել են 4,8 մլն դրամ, 6 հազար ԱՄՆ դոլար եւ 1 հազար 800 դոլար: Բանկային ավանդները կազմել են 5 մլն դրամ:

Հաշվետու տարվա եկամուտը կազմել է 15 մլն 957 հազար դրամ, որից 11 մլն 593 հազար դրամն աշխատանքի վարձատրություն է ՀՀ Պետական պահպանության ծառայությունից, իսկ 3 մլն դրամը ՀՀ ՊՊԾ-ից, սակայն ոչ թե որպես աշխատանքի վարձատրություն, այլ որպես «այլ եկամուտ»:

Արթուր Գասպարյանը որպես կենսաթոշակ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից ստացել է 1 մլն 352 հազար դրամ եկամուտ: Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 16 մլն 710 հազար դրամ, որը բնակարանի հիփոթեքի մայր գումարի մնացորդն է:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԳԵՐԻՆԵՐԻ ՀԱՐՑՈՎ ԱԺ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ընդդիմադիր «Հայաստան» եւ «Պատիվ ունեմ» խմբակցությունները երեկ Բաքվում ապօրինի պահվող հայ գերիների հարցով հրատապ քննարկում են նախաձեռնել:

Քննարկումը տեղի կունենա այսօր՝ նոյեմբերի 12-ին գումարվող ԱԺ հերթական նիստերի երրորդ հիմնական նիստում:

Ընդդիմությունը պահանջում է ԱԺ հայտարարություն ընդունել՝ պահանջելով ազատ արձակել հայ ռազմագերիներին եւ պատանդներին:

«Ադրբեջանական ագրեսիայի եւ արցախահայության բռնի տեղահանման հետեւանքով ավելի քան 1 տարի ապօրինաբար գերության մեջ են պահվում Արցախի Հանրապետության բազմաթիվ հայազգի քաղաքացիներ, իրենց տունն ու հայրենիքը պաշտպանող անձինք, այդ թվում՝ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարությունը: Բաքվի բանտերում մեր հայրենակիցներին պահելն ու խոշտանգելը ոչ միայն Ադրբեջանի հայատյաց քաղաքականության հետեւանք է, որի դրսեւորումները չեն դադարում մինչ օրս, այլեւ առկա բանակցային գործընթացում մարդկային կյանքերը, ազատությունն ու արժանապատվությունը որպես ճնշման միջոց օգտագործելու փորձ»:

Նման պայմաններում, ըստ ընդդիմադիրների, Բաքվում COP-29-ի անցկացմանը զուգընթաց՝ «ՀՀ ԱԺ-ն պարտավոր է վերաբերմունք արտահայտել այս անմարդկային եւ միջազգային իրավունքի համաձայն դատապարտելի երեւույթին՝ միջազգային հանրության ուշադրությունը հրավիրելով եւ ակնկալելով վերջինիս ազդեցության կիրառումը՝ պահանջելով Ադրբեջանից անմիջապես ազատ արձակել գերեվարված եւ պատանդառված Արցախի ռազմաքաղաքական ղեկավարությանը եւ մյուս բոլոր հայ գերիներին»:

Հայտարարության նախագծի զեկուցողը «Պատիվ ունեմ» խմբակցության քարտուղար Տիգրան Աբրահամյանն է:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

«ԵՐԵՎԱՆ ԱՎՏՈԲՈՒՍ». ՄԵԿ ՇԱԲԱԹՎԱ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ

«Նույնիսկ այս դժվարին պայմաններում մենք մեկ շաբաթվա ընթացքում մոտավորապես 24 մլն դրամ հավելյալ գումար ենք հավաքագրել «Երեւան ավտոբուս»-ում»:

Երեկ Երեւանի քաղաքապետարանի գործակարգավարական խորհրդակցության ժամանակ ասաց քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

«Երեւան ավտոբուսից» զեկուցեցին, որ միջինացված՝ օրական շուրջ 3.5 մլն դրամ գումար է հավաքագրվում:

ՀՀ-Ն ՈՐՈՇՈՒՄ ՈՒՆԻ՞ COP 29-ԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱԳ փոխնախարար Վահան Կոստանյանը հայտնել է, թե Հայաստանը դեռ որոշում չունի՝ կմասնակցի Բաքվում մեկնարկելիք COP-29 համաժողովին, թե ոչ: Ըստ նրա՝ գործընթացի դինամիկայից է կախված Հայաստանի մասնակցության հարցը. «Վստահաբար, այն պահին, երբ լինի որոշումը, մենք պատշաճ կերպով կտեղեկացնենք»,- ասել է փոխնախարարը: Հարցին՝ Բաքվի հետ կա՞ն քննարկումներ այդ միջոցառմանը մասնակցելու եւ գերիների վերադարձի վերաբերյալ, նա ասել է. «Ընդհանուր բանակցային դինամիկայից պետք է դատել, բնականաբար, կան խողովակներ, որոնցով ընթանում են շփումները, այդ թվում նաեւ՝ 11-րդ ադրբեջանական նախագծի խմբագրումը ստացանք վերջերս»:

ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՒՅՑՆ ԱՎԱՐՏՎԱԾ Է

2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծած ռազմական գործողությունների հանգամանքների ուսումնասիրման նպատակով ստեղծված ԱԺ քննիչ հանձնաժողովի պատրաստած զեկույցը դեկտեմբերին կմտնի փորձաքննության փուլ՝ կապված գաղտնիության ռեժիմի հետ: Այս մասին լրագրողների հետ զրույցում ասաց քննիչ հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը:

«Դեկտեմբերին զեկույցը կմտնի փորձաքննությունների փուլ, այն ավարտված է», - ասաց Քոչարյանը՝ հավելելով, որ զեկույցը մեծածավալ է:

Անդրադառնալով հարցին, թե կա՞ն կարեւոր բացահայտումներ՝ նա ասաց. «Իհարկե, առանց բացահայտման ո՞նց կարող է լինել»:

Պատգամավորը չբացառեց, որ այդ բացահայտումներին կարող են քրեական գործեր հաջորդել: ԱԺ լիագումար նիստերի դահլիճում զեկույցը հրապարակվելու է ամբողջ ծավալով:

Քննիչ հանձնաժողովը ստեղծվել էր 2022 թվականի փետրվարին «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորների նախաձեռնությամբ:

ՏՐԱՆՍՊՈՐՏԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱԹԵԹ

«Միասնական տոմսային համակարգը մեր քմահաճույքը չէ: Այն հանրային տրանսպորտի որակի պահպանման եւ բարելավման միակ բանաձեւն է»,- երեկ Երեւանի քաղաքապետարանի գործակարգավարական խորհրդակցության ժամանակ ասաց Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

«Գալիք ավագանու նիստում քննարկելու ենք տրանսպորտից օգտվելու արտոնությունների փաթեթն այն խմբերի համար, որոնք իրապես այդ կարիքն ունեն», - ասաց Տիգրան Ավինյանը:

ԱՄՆ ԵՎ ՌԴ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑԻ ԼՈՒՐԵՐԸ ՍՈՒՏ ԵՆ

Արտասահմանյան մամուլի հաղորդագրությունները Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի եւ ԱՄՆ ընտրված առաջնորդ Դոնալդ Թրամփի միջեւ ենթադրյալ հեռախոսազրույցի մասին սուտ են: Այս մասին ճեպազրույցում հայտարարել է ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը:

«Ոչ մի խոսակցություն չի եղել: Սա բացարձակապես չի համապատասխանում իրականությանը, սա մաքուր հորինվածք է», - ասել է Կրեմլի խոսնակը:

ԱԼԻԵՎԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ՇԱՌԼ ՄԻՇԵԼԻ ՀԵՏ

Նոյեմբերի 11-ին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը հանդիպել է Եվրամիության խորհրդի նախագահ Շառլ Միշելի հետ:

ԵՄ բարձրաստիճան պաշտոնյայի այցը տեղի է ունենում Ադրբեջանում Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի (COP29) կողմերի համաժողովի 29-րդ նստաշրջանի շրջանակում:

COP29-ը Բաքվում անցկացնելու որոշումը կայացվել է 2023-ի դեկտեմբերին՝ Արցախի վրա ադրբեջանական լայնածավալ հարձակումից եւ հայաթափումից ընդամենը երեք ամիս անց: Որոշումն ընդունվեց նաեւ Հայաստանի աջակցության շնորհիվ, ինչի դիմաց Ադրբեջանը համաձայնեց ազատ արձակել 32 հայ ռազմագերիների:

Համաժողովին կմասնակցեն ավելի քան 100 պետությունների ու կառավարությունների ղեկավարներ, փոխնախագահներ:

Ավելի ուշ ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը Ազգային ժողովում լրագրողների հետ զրույցում հայտնել էր, որ հնարավոր է Բաքու մեկնի՝ պայմանով, որ Ադրբեջանը Հայաստանին գերիներ վերադարձնի:

Ըստ պաշտոնական տվյալների՝ Ադրբեջանում հիմա 23 հայ է գերության մեջ, նրանցից 8-ը Արցախի ռազմաքաղաքական նախկին ղեկավարությունն են: Հավելենք նաեւ, որ թվով 80 զինծառայողի գերության մասին փաստող տվյալներ կան, որոնք Ադրբեջանը ոչ մի կերպ չի ընդունում:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐՎԵՆ

ՏԵՍԱԽՑԻԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՍԱՌԵՑՎԵԼ Է

Ներքին գործերի նախարարությունը երեկ հայտարարեց, որ սառեցնում է աղմկահարույց նախագիծը, որով ոստիկանությունը 24/7 ռեժիմով հասանելիություն կունենա մի շարք տնտեսավարողների տեսահսկման համակարգերին:

Հիշեցնենք, որ հունիսին ԱԺ-ն 67 կողմ, 21 դեմ ձայներով առաջին ընթերցմամբ ընդունեց օրենսդրական փաթեթ, որով նախատեսվում է մի շարք կազմակերպությունների եւ տնտեսավարողների համար սահմանել պարտականություն՝ շինության մուտքը եւ բոլոր կողմերը դրսից ապահովելու տեսահսկման համակարգերով: Առաջարկվում է նաեւ շտապօգնության մեքենաների եւ ուղեւորափոխադրում իրականացնող ավտոբուսների ու միկրոավտոբուսների ուղեւորասրահները եւս տեսահսկման համակարգերով ապահովել: Սահմանվում է նաեւ ստորգետնյա ավտոկայանատեղիներում առկա ցանցային համալրում, ինչը կնպաստի 24/7 ռեժիմով իրավիճակին տեղյակ լինելուն:

Ըստ նախագծի՝ ոստիկանությունն անհրաժեշտության դեպքում իրավունք կունենա պահանջել եւ ստանալ վերոգրյալ տեսահսկման համակարգերի տեսագրությունները, ինչպես նաեւ ունենալ հասանելիություն այդ համակարգերին՝ «Տեսալուսանկարահանող էլեկտրոնային համակարգերի կառավարման կենտրոն» ՊՈԱԿ-ի միջոցով ամենօրյա 24-ժամյա իրական ժամանակի ռեժիմով:

Նախագծի համահեղինակներից է նաեւ ՔՊ խմբակցության պատգամավոր Հայկ Սարգսյանը:

«Ժողովուրդ» օրաթերթը նրանից հետաքրքրվել է՝ ինչու է նախագիծը սառեցվել, արդյոք քննադատությունների մեծ ալիքն է պատճառը: Վերջինս էլ նշեց, որ նախագծում փոփոխություններ պետք է արվեն:

«Մի քանի փոփոխություններ կարվեն, հետո կրկին շրջանառության մեջ կդնենք՝ կամ ես, կամ ՆԳՆ-ի հետ համատեղ:

Ըստ փոփոխությունների՝ առաջին փուլով կառավարության ենթակա մարմինների եւ համայնքային մարմինների տեսախցիկները կմիանան համակարգին, հետո նոր մասնավորը կմիանա:

Հրատապություն չկա, քանի որ օրենքը եթե ընդունենք էլ 1.5 տարի հետո նոր ուժի մեջ է մտնելու, մենք շտապելու բան չունենք, փոփոխությունները կարվեն, հետո ժամկետի մեջ օրենքն ուժի մեջ կմտնի», - ասաց Հայկ Սարգսյանը:

Ավելի վաղ ներքին գործերի նախարարությունը հայտարարություն էր տարածել, որում ասվում էր. «...Նախագծերի մշակման ընթացքում ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից իրականացվել է ոլորտի միջազգային առաջավոր փորձի համակողմանի ուսումնասիրություն եւ վերլուծություն, քննարկվել եւ լուծումներ են առաջադրվել կարգավորումների ամբողջականությունն ապահովող բոլոր հնարավոր հարցերի, այդ թվում՝ մարդու հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանության սահմանադրական երաշխիքների կապակցությամբ: Վերջինիս համատեքստում ուսումնասիրության առարկա է դարձել նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ մարդու մասնավոր եւ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությանը վերաբերելի իրավակիրառ պրակտիկան...»:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանում տեղական ինքնակառավարման ոլորտում մեծ եւ խոշոր մասշտաբով բարեփոխումներ են իրականացվել, հատկապես համայնքների խոշորացման հարցում:

Երեւանում տեղի ունեցած Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման 28-ամյակին նվիրված միջոցառմանն այս մասին ասաց վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Փաշինյանը նշեց, որ բազմաթիվ հարցեր դեռեւս լուծման փուլում են, եւ այս հարցերն անպայման պետք է ստանան պատասխաններ:

«Ուզում եմ գոհունակություն արտահայտել այն վճռականության առիթով, որը մենք ունեցել ենք, ցուցաբերել ենք եւ, իհարկե, ակնհայտորեն ունենք տեղական ինքնակառավարման ոլորտում բարեփոխումներ իրականացնելու համար», - ասաց վարչապետը՝ խոսելով համայնքների խոշորացման մասին:

Փաշինյանը կիսվեց իր մտավախություններով՝ կապված ազգային փոքրամասնություններով բնակեցված համայնքների իրադրության հետ: Նա նշեց, որ չխոշորացվող համայնքների եւ խոշորացված համայնքների միջեւ ճեղքն այսօր արդեն նկատելի է, ինչը կարող է առաջացնել լարվածություն:

Վարչապետն ընդգծեց, որ սուբվենցիոն համակարգում որոշակի փոփոխություններ են եղել, որոնք պետք է թույլ տան մեծացնել ազգային փոքրամասնությունների համայնքների սուբվենցիոն հնարավորությունները:

«Իմ մտավախությունն այն է, որ այդ միջոցներով էլ չենք կարողանալու այդ ճեղքը լրացնել, որովհետեւ այն շատ արագ տեմպերով մեծանում է: Եվ քաղաքական լարվածությունն այն է, որ կարող է ինչ-որ պահի տպավորություն ստեղծվել, թե Հայաստանում ազգային փոքրամասնությամբ բնակչություն ունեցող համայնքների նկատմամբ կա խտրական վերաբերմունք, որովհետեւ այդ ճեղքը աչքի է զարնում հենց այսօր»,- ընդգծեց Փաշինյանը:

Վարչապետը շեշտեց, որ այս հարցերը պետք է քննարկվեն ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ, որպեսզի համապարփակ ու արդարացի լուծումներ լինեն:

Հայաստանում խոշորացման չեն ենթարկվել միայն ազգային փոքրամասնությամբ բնակեցված 5 գյուղեր՝ Արզնի, Վերին Դվին, Ֆերիկ, Ֆիոլետովո, Շամիրամ:

COP29–Ը ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է. ՀԱՅ ԳԵՐԻՆԵՐԸ ԴԵՌ ՉԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՎԵԼ

Նոյեմբերի 11-ին Բաքվում մեկնարկել է COP29-ը՝ Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի 29-րդ համաժողովը: Այն տեւելու է մինչեւ նոյ. 22-ը: COP29-ը Բաքվում անցկացնելու որոշումը կայացվել է 2023-ի դեկտեմբերին՝ Արցախի վրա ադրբեջանական լայնածավալ հարձակումից եւ հայաթափումից ընդամենը երեք ամիս անց: Որոշումն ընդունվեց նաեւ Հայաստանի աջակցության շնորհիվ, ինչի դիմաց Ադրբեջանը համաձայնեց ազատ արձակել 32 հայ ռազմագերիների:

Համաժողովին կմասնակցեն ավելի քան 100 պետությունների ու կառավարությունների ղեկավարներ, փոխնախագահներ: Բաքու է մեկնել նաեւ Եվրամիության խորհրդի նախագահ Շառլ Միշելը:

Ավելի ուշ ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը Ազգային ժողովում լրագրողների հետ զրույցում հայտնել էր, որ հնարավոր է Բաքու մեկնի՝ պայմանով, որ Ադրբեջանը Հայաստանին գերիներ վերադարձնի:

Ըստ պաշտոնական տվյալների՝ Ադրբեջանում հիմա 23 հայ է գերության մեջ, նրանցից 8-ը Արցախի ռազմաքաղաքական նախկին ղեկավարությունն է: Հավելենք նաեւ, որ թվով 80 զինծառայողի գերության մասին փաստող տվյալներ կան, որոնք Ադրբեջանը ոչ մի կերպ չի ընդունում: Հիշեցնենք, որ Բաքուն Արցախի նախկին պաշտոնյաներին ծանր մեղադրանքներ է առաջադրել՝ ահաբեկչությունից մինչեւ ապօրինի զինված խմբավորումների կազմավորում:

Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը եւս նախապայման է սահմանել՝ գերիներին չվերադարձնելու դեպքում COP29-ին մասնակցությունը ճիշտ չէ:

Նշենք, որ ավելի վաղ լուրեր էին շրջանառվում, որ Բաքուն մինչ միջոցառման մեկնարկը հնարավոր է հայ գերիների ազատ արձակի, սակայն նրանց մեջ չեն մտնում Արցախի ռազմաքաղաքական գերիները: Մինչ այժմ Ադրբեջանի կողմից որեւէ հայտարարություն չկա հայ գերիների ազատ արձակման մասին:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

ԻՆՉՆ Է ԵՂԵԼ ԱՐՏԱՇԱՏՈՒՄ ԿՐԱԿՈՑՆԵՐԻ ՊԱՏՃԱՌԸ

«Ժողովուրդ» օրաթերթին մանրամասներ են հայտնի դարձել Արտաշատ քաղաքի սպանությունից. մասնավորապես, կրակոցի պատճառը երեխաների միջեւ տարաձայնությունն է եղել, ու, փոխարենը երեխաների վեճը հարթեն, ծնողներն ավելի են իրավիճակը թեժացրել, եւ մի կաթիլ մեղրի պատմության հետեւանքով կրակոցներ են հնչել, եւ արդյունքում՝ 2 զոհ:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ ՀՀ ոստիկանապետ Արամ Հովհաննիսյանը հրահանգ է տվել, որ կոնկրետ անձանց տան մոտ ոստիկանությունը հսկողություն իրականացնի՝ հնարավոր վենդետան կանխելու նպատակով:

Ավելի վաղ քննչական կոմիտեն հայտարարություն էր տարածել, որում, մասնավորապես, ասվում էր. «Նոյեմբերի 8-ին՝ ժամը 21:00-ին, «Արտաշատ» բժշկական կենտրոնից ՆԳՆ ոստիկանություն հաղորդում է ստացվել, որ բուժօգնության են դիմել հրազենային վնասվածքներով քաղաքացիներ: 15 րոպե անց նույն կենտրոնից ստացվել է եւս մի հաղորդում. բուժօգնության դիմած չորս քաղաքացուց երեքը բուժօգնություն են ստանում, իսկ Ազատամարտիկների փողոցի 15-ամյա բնակիչ Ռուբեն Ռուբենյանը վիրահատարանում մահացել է:

Քրեական ոստիկանության Արարատի մարզային վարչության, Համայնքային ոստիկանության Արարատի տարածքային ստորաբաժանումների ծառայողները եւ Արարատի մարզի պարեկները րոպեներ անց դեպքի վայր են մեկնել՝ հնարավոր զարգացումները կանխելու նպատակով:

Մեկնել են նաեւ ոստիկանության պետ-ՆԳ նախարարի տեղակալ Արամ Հովհաննիսյանը, նրա տեղակալներն ու նախարարության ղեկավար կազմի ներկայացուցիչներ:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ նոյեմբերի 8-ին՝ ժամը 20:20-ի սահմաններում, Արտաշատից Ոստան գյուղ տանող ճանապարհի հարակից տարածքում, զավակների հետ կապված վիճաբանության ժամանակ Արտաշատի Ազատամարտիկների փողոցի բնակիչ 46-ամյա Արտակ Մաթեւոսյանը եւ Աղայան փողոցի բնակիչ 45-ամյա տղամարդը, ըստ նախնական տվյալների, իրենց մոտ եղած հրացաններով կրակել են իրար վրա, ինչի հետեւանքով Արտակ Մաթեւոսյանը մահացել է, իսկ 46-ամյա տղամարդը հրազենային վնասվածքներով տեղափոխվել է բժշկական կենտրոն:

Միջադեպի հետեւանքով 2 անձ մահացել է, 4-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Ոստիկանների ձեռնարկած անհետաձգելի օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում կանխվել են հետագա զարգացումները եւ պարզվել են վիճաբանության պատճառն ու դեպքին առնչվող այլ հանգամանքներ, որոնք այս պահին հրապարակման ենթակա չեն:

Ըստ այս պահին հայտնի տվյալների՝ հրազեններից մեկը, որից արձակվել են կրակոցներ, որսորդական է, որը հաշվառված է կրակոցներ արձակողի անվամբ:

Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում կան ձերբակալվածներ:

Քննչական գործողությունները եւ օպերատիվ-հետախուզական ու կանխարգելիչ միջոցառումները շարունակվում են»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՄԻ ԽՈՒՄԲ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ ՎԻՃԵԼ ԵՆ ՈՒ ԿՐԱԿՈՑՆԵՐ ԱՐՁԱԿԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նոյեմբերի 9-ին Սիսիան քաղաքի Որոտան փողոցում մի խումբ տղաներ մեքենան կայանելու հարցի շուրջ վիճաբանել են միմյանց հետ, որից հետո տեղափոխվել են Սիսիան-Աղիտու ճանապարհին գտնվող «Ճաշարան» կոչվող կիսաքանդ շինության մոտ, որտեղ Հ. Գ.-ն իր մոտ պահվող ինքնաձիգից կրակոցներ է արձակել Ա. Բ.-ի եւ Ա. Ն.-ի ուղղությամբ:

Վերջինս աջ ոտնաթաթի միջին պճեղի եւ ներբանի շրջանների միջանցիկ պատռած, ջնջխված վերքեր, կրնկոսկրի բազմաբեկոր կոտրվածքով նույն օրը՝ ժամը 20:30-ին, տեղափոխվել է «Սիսիան» հիվանդանոց, իսկ այնտեղից՝ «Իզմիրլյան» ԲԿ:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ դեպքի վայրում հայտնաբերվել են արնանման հետքեր եւ 2 պարկուճ: Հ.Գ.-ն խոստովանել եւ ներկայացրել «ԱԿ» տիպի 7.62մմ տ/չ ինքնաձիգը:

Քննչականում սպանության փորձով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԽՈՇՈՐ ՉԱՓԵՐՈՎ ՀԱՐԿ ՉՎՃԱՐԵԼՈՒ ԴԵՊՔ

ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչությունում քննվող քրեական վարույթով բացահայտվել է տնտեսվարող սուբյեկտի կողմից առանձնապես խոշոր չափերով հարկեր չվճարելու դեպք: Այս մասին հայտնում է քննչական կոմիտեն:

Նախաքննության ընթացքում կատարված մեծածավալ վարութային գործողությունների, ՀՀ ԱԱԾ եւ ՀՀ ՊԵԿ հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչության աշխատակիցների կողմից ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ ավտոմեքենաների համար հեղուկ գազի, սեղմված բնական գազի եւ գազոլինի մանրածախ առեւտրով զբաղվող ՍՊ ընկերության պատասխանատու անձինք, նույն ընկերության աշխատակիցների օժանդակությամբ, հարկերը չվճարելու նպատակով, խախտելով ՀՀ հարկային օրենսգրքի պահանջները, 2020 թվականի հունվար ամսից մինչեւ 2023 թվականի հուլիս ամիսն ընկած ժամանակահատվածում թաքցրել են ընկերության հարկման օբյեկտը: Մասնավորապես, վաճառքներ իրականացնելիս չեն տրամադրել հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոններ, իսկ հարկային հաշվարկներում մտցրել են խեղաթյուրված տվյալներ, ինչի արդյունքում պետական բյուջե չեն վճարել առանձնապես խոշոր չափերով հարկեր:

Քրեական վարույթով ձեռք բերված բավարար ապացույցների հիման վրա վեց անձի նկատմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով կետով, հարուցվել են հանրային քրեական հետապնդումներ: Չորս անձի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը, իսկ երկուսի նկատմամբ՝ համակցված՝ գրավ եւ բացակայելու արգելք:

Նախաքննության ընթացքում ընկերության պատասխանատու անձինք հարկային մարմին են ներկայացրել ճշտված հարկային հաշվարկներ, հայտարարագրել նախկինում թաքցված շրջանառությունը եւ պետական բյուջե են վճարել 118 000 000 ՀՀ դրամ:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԽՄԲԻ ԱՆԴԱՄԸ ԲԱՆՏՈՒՄ ԻՆՍՈՒԼՏ Է ՍՏԱՑԵԼ

Փաստաբան Արայիկ Պապիկյանը հայտնում է, որ «Սասնա Ծռեր» խմբի անդամ, ապստամբ Մխիթար Ավետիսյանը բանտում ինսուլտ է ստացել:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ նա հիվանդանոցում է եւ գտնվում է բժիշկների հսկողության տակ, ստանում է անհրաժեշտ բուժում:

ՎԵՃ, ՈՐՆ ԱՎԱՐՏՎԵՑ ՄԱՀՈՎ

2024 թվականի նոյեմբերի 8-ին՝ ժամը 23:18-ին, «Մասիս ԲԿ» ՓԲԸ-ից հաղորդում է ստացվել այն մասին, որ կտրածծակած վնասվածքով, ընկերների ուղեկցությամբ, իրենց մոտ բուժօգնության է դիմել է Նոր Խարբերդ բնակավայրի բնակիչ, 17-ամյա երիտասարդ, ով նույն օրը՝ ժամը 23:45-ին, մահացել է:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի հատկանիշներով:

Քննությամբ տվյալներ են ստացվել այն մասին, որ երիտասարդը կյանքի հետ անհամատեղելի մարմնական վնասվածքներն ստացել է Նոր խարբերդ բնակավայրի գերեզմանատան հարեւանությամբ երկու խմբերի միջեւ տեղի ունեցած վիճաբանության ժամանակ:

Նախաքննության ընթացքում կատարվել են մի շարք քննչական անհրաժեշտ գործողություններ: Դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվել են արյան հետքեր, վերցվել են փորձանմուշներ, հարցաքննվել են դեպքին ականատես վկաներ:

Նշանակվել են դիակի դատաբժշկական, ինչպես նաեւ դատաբժշկական փորձաքննություններ:

ՆԳՆ ոստիկանության համապատասխան ստորաբաժանման ծառայողների կողմից ձեռնարկված օպերատիվ- հետախուզական եւ օպերատիվ-որոնողական միջոցառումների արդյունքում ենթադրյալ հանցագործություն կատարած անձանցից մեկը՝ Գ.Յ.-ն, հայտնաբերվել եւ ներկայացվել է վարույթն իրականացնող մարմնին: Նրա նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել եւ նրան մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ եւ 8-րդ կետերով: Դատարանը բավարարել է վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորում կիրառելու՝ քննիչի միջնորդությունը:

Նախաքննությունը շարունակվում է: Ձեռնարկվում են միջոցառումներ՝ միջադեպին մասնակից բոլոր անձանց ինքնությունը պարզելու, նրանց հայտնաբերելու, արարքներն անհատականացնելու, իրավական գնահատականի արժանացնելու ուղղությամբ:

Ոստիկանության համապատասխան ստորաբաժանմանը տրվել են հանձնարարություններ:

Ծանուցում. Հանցանքի համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 7-ից 8-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 80 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ՓԱՇԻՆՅԱՆԻ ՔԵՌՈՒ ՏՂԱՆ ՄՏԱԴԻՐ Է ԴՈՒՐՍ ԳԱԼ ՔՊ–ԻՑ

Նախկինում գրել ենք, որ այս տարվա սեպտեմբերի 10-ին «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի հարազատը՝ ազգային պարկի աշխատակիցներից մեկը, ինքնաշեն ատրճանակից կրակ է բացել այդ ազգային պարկի տնօրենի օգնական, Նիկոլ Փաշինյանի քեռու տղա, Դիլիջան համայնքի Հաղարծին գյուղի բնակիչ Մամիկոն Հովհաննիսյանի ուղղությամբ, որից հետո Մամիկոնը ազգային պարկից արձակուրդ է վերցրել: Դիլիջանի ազգային պարկի աշխատողներից մեկը, իր անունը չհրապարակելու պայմանով, հայտնեց, որ Մամիկոնի վրա կրակել են նրան վախեցնելու նպատակով, քանզի դրանից առաջ Մամիկոնը Դիլիջանի ազգային պարկի «Դիլիջան» տեղամասի «Ճիլկուտ» տարածքում հայտնաբերել է 2 հեկտար մակերեսով ապօրինի օգտագործվող հողամաս, որտեղից ավազ է հանվել: Այդ մասին Մամիկոնի եւ Դիլիջանի ազգային պարկի տնօրեն Ռոբերտ Ալիխանյանի միջեւ տհաճ խոսակցություն է տեղի ունեցել: Ազգային պարկի աղբյուրը հայտնեց, որ Մամիկոն Հովհաննիսյանը արձակուրդից վերադարձել է. նա նոյեմբերի 8-ի դրությամբ մտադիր էր դիմում գրել, դուրս գալ ՔՊ կուսակցությունից եւ ազգային պարկում աշխատանքից: Մեր աղբյուրը հայտնեց, որ կարապը, գայլաձուկը եւ խեցգետինը բարձած սայլը՝Դիլիջանի ազգային պարկը տարբեր կողմեր են քաշում, որպես «սայլը տարբեր կողմեր քաշողներ» նշելով Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանին, նրա տեղակալ Արման Բազինյանին եւ Դիլիջանի ազգային պարկի տնօրեն Ռոբերտ Ալիխանյանին: Նիկոլ Փաշինյանի քեռու տղա Մամիկոն Հովհաննիսյանը նախկինում դատված է եղել: ՀՀ բնապահպանության նախարարության «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ինժեներ Մամիկոն Հովհաննիյանը, 2019թ. փետրվար ամսին կադրերի բաժին ներկայացնելով Հայկական գյուղատնտեսական ինստիտուտը 1993թ. «Գյուղատնտեսության մեքենայացում» մասնագիտությամբ ավարտելու եւ ինժեներ-մեխանիկի որակավորում ստանալու մասին դիպլոմի պատճեն, նշանակվել է հիշյալ կազմակերպությունում բաժնի պետ-տնօրենի տեղակալի պաշտոնում: Քննությամբ տվյալներ են ձեռք բերվել՝ՊՈԱԿ-ի ինժեների կողմից կադրերի բաժին ներկայացված դիպլոմի առերեւույթ կեղծված լինելու մասին: 2019թ. հունիսի 6-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Ջոյա Ջաքինյանը վճռել է Մամիկոն Նապոլեոնի Հովհաննիսյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 325 հոդվածի 1-ին մասով եւ նրան դատապարտել 200 հազար դրամի չափով տուգանքի: Մ. Հովհաննիսյանը 2022 թվականի հունիսի 8-ից ՊՈԱԿ-ում զբաղեցնում է տնօրենի օգնականի պաշտոնը: Վերջինս ունի միջնակարգ կրթություն, աշխատանքի ընդունվելիս ներկայացրել է տեղեկանք այն մասին, որ սովորում է Հայաստանի եվրոպական համալսարանի Իջեւանի մասնաճյուղում «կառավարում» մասնագիտությամբ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

ՍՈՒՐ ՇՆՉԱՌԱԿԱՆ ՎԱՐԱԿՆԵՐԸ ԱՎԵԼԱՑԵԼ ԵՆ

«Սուր շնչառական վարակների թիվը սեզոնի համեմատ փիչ են»,- այս մասին լրագրողների հետ զրույցում ասել էր առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը:

ՀՀ Վիճակագրական կոմիտեի տվյալները թերեւս փաստում են այն, քանի որ 2024 թվականի սեպտեմբերին արձանագրվել է սուր շնչառական վարակների 11 հազար 231 դեպք:

Սակայն հարկ է նշել, որ նախորդ տարվա՝ 2023 թվականի սեպտեմբերի համեմատ, այս ցուցանիշն ավելացել է 364-ով: Նախորդ տարի սուր շնչառական վարակներով հաշվառվել է 10 հազար 867 մարդ:

«Ժողովուրդ» օրաթերթը, ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներն ուսումնասիրելով, նկատել է, որ բոլոր տեսակի անգինաների դեպքում հիվանդների քանակի աճ է նկատվել:

2024 թվականի սեպտեմբերին բոլոր տեսակի անգինաներով վարակվածների թիվը կազմել է 228, իսկ նախորդ տարի նույն ժամանակահատվածում 110 դեպք է հաշվառվել:

Սուր շնչառական վարակները հանդիսանում են աշխարհում ամենատարածված հիվանդությունների խումբ, որոնց հարուցիչները հիմնականում վիրուսներն են՝ ներառելով՝ գրիպի, ռեսպիրատոր սինցիտյալ վիրուսը, ադենովիրուսը, բոկավիրուսը, եւ այլ վիրուսային հարուցիչներ:

Դրանք կարող են ընթանալ ծանր եւ առաջացնել բարդություններ, ինչպիսիք են թոքաբորբը, բրոնխիտը, ականջաբորբը եւ այլն: Բարդությունների զարգացման առավել խոցելի խումբ են երեխաները՝ հատկապես կյանքի առաջին տարիների ընթացքում, տարեցները եւ քրոնիկ հիվանդություններ ունեցող անձինք:

Հիշեցնենք, որ սուր շնչառական վարակներով չիվանդանալու, ինչպես նաեւ բարդություններից խուսափելու նպատակով՝ առողջապահության նախարարությունը հիշեցնում եւ հորդորում է.

- Պատվաստվե՛ք սեզոնային գրիպի դեմ՝ դիմելով առաջնային առողջության պահպանման կազմակերպություն,
- խուսափե՛ք սուր շնչառական վարակներին բնորոշ ախտանշաններով հիվանդների հետ շփումից,
- եթե հիվանդ եք՝ մնացե՛ք տանը, հատկապես՝ սուր շնչառական վարակներին բնորոշ աշտանշաններով երեխաներին մի՛ թույլատրեք հաճախել դպրոց եւ մանկապարտեզ՝ ապահովելով բժշկի կողմից խորհրդատվությունը եւ բուժումը,
- եթե հիվանդ եք, հրավիրեք տեղամասային մանկաբույժին, թերապեւտին կամ ընտանեկան բժշկին եւ մի՛ զբաղվեք ինքնաբուժմամբ,
- մի՛ օգտագործեք հակաբիոտիկներ, քանի որ դրանք ցուցված չեն գրիպի եւ սուր շնչառական վարակների բուժման համար,
- հագնվե՛ք եղանակին համահունչ,
- պահպանե՛ք հազի եւ փռշտալու վարվելակարգը,
- օգտագործե՛ք հնարավորինս շատ հեղուկներ,
- հաճախակի օդափոխե՛ք փակ տարածքները,
- հետեւե՛ք անձնական հիգիենային:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԸՆԹԱՑԻԿ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹԻՎՆ ԱՃԵԼ Է

Հայաստանի բնակչությունը 2024 թվականի սեպտեմբերին կազմել է 3 մլն 67.4 հազար մարդ: 2023 թվականի նույն ժամանակահատվածում ՀՀ բնակչության թիվը կազմել է 2 մլն 954.7 հազար մարդ:

Բնակչության թվի փոփոխմամբ՝ Երեւանում բնակչության թիվն ավելացել է գրեթե 45 հազարով. նախկին 1 մլն 92 հազար բնակչությունը դարձել է 1 մլն 136 հազար մարդ:

Բնակչության թվի գրեթե ոչ մի փոփոխություն չեն կրել Տավուշի, Վայոց ձորի, Սյունիքի, Գեղարքունիք մարզերը:

Հարկ է նշել, որ ՀՀ բնակչության թվի փոփոխությունը խիստ փոխկապակցված է Արցախից բռնի տեղահանված հայերի ՀՀ քաղաքացիություն ստանալու հետ:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

«ՄԱՆԿԱԿԱՆ ԵՎՐԱՏԵՍԻԼ 2024»–Ի ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁԸ

Տեղի է ունեցել «Մանկական Եվրատեսիլ 2024» երգի մրցույթում Հայաստանի պատվիրակ Լեոյի առաջին բեմական փորձը: Այս մասին հայտնում է Առաջին ալիքը:

Այս առիթով Լեոյի մայրը՝ երգչուհի Հռիփսիմե Հակոբյանը, ինստագրամյան իր էջում լուսանկար է հրապարակել, որին կից գրել է. «Հպարտ եմ քեզնով»:

Հիշեցնենք, որ Հայաստանը «Մանկական Եվրատեսիլ-2024» երգի մրցույթում ներկայացնելու է Լեո Մկրտչյանը:

Հայաստանի այս տարվա պատվիրակն ընտրվել է Հանրային հեռուստաընկերության նախապես հայտարարած մրցույթի արդյունքում, որին 100-ից ավելի հայտ էր ստացվել:

Տեղի եւ միջազգային լավագույն մասնագետներից բաղկացած փորձագիտական խմբի որոշմամբ լավագույնն է ճանաչվել 10-ամյա Լեոն:

Նշենք, որ «Մանկական Եվրատեսիլ»-ն այս տարի անցկացվելու է Իսպանիայի մայրաքաղաք Մադրիդում նոյեմբերի 16-ին՝ «Ծաղկենք» խորագրի ներքո:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ ԱՐՑԱԽԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Համագործակցության սկիզբ է դրվել Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի եւ Մետապորտ (Metaport.ai) միջազգային հարթակի միջեւ: Այդ մասին հայտնում է Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի փոխտնօրեն Ռաֆֆի Քորթոշյանը:

Արդյունքում, ՀՃՈՒ Հիմնադրամի armenianarchitecture.org եւ artsakhmonuments.org կայքէջերի ողջ նյութերը (հայկական բարձրավանդակի եւ սփյուռքի ավելի քան 10500 հուշարձանի տեղեկություն՝ մոտ 13500 լուսանկարներով եւ այլ օժանդակ նյութերով) տեղադրվել են նաեւ Metaport հարթակում:

ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԱՐԿԵՏՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը տեղեկացնում է, որ նոյեմբերի 14-ին՝ ժամը 11:00-ին, տեղի կունենա ԿԳՄՍ նախարարի հրամանով ստեղծված մշակույթի եւ արվեստի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու վերաբերյալ եզրակացություն տվող հանձնաժողովի նիստը:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 17 պատահար. 2 մարդ զոհվել է, 23-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿԱՎԵԼԱՆԱ 20 ՆՈՐ ԱՊՐԱՆՔ

ՀՀ կառավարությունը նախատեսում է Հայաստանի արտաքին առեւտրի ապրանքների միասնական ցանկում ավելացնել եւս 20 անուն ապրանք, որոնք նախատեսված են լաբորատոր հետազոտությունների եւ որպես էտալոնային ստանդարտ օգտագործման համար: Նախագիծը հրապարակվել է e-draft.am իրավական ակտերի հրապարակման միասնական կայքում:

Այս փոփոխությունը նպատակ ունի ապահովել Հայաստանի ներսում բույսերի պաշտպանության միջոցների եւ այլ կայուն օրգանական աղտոտիչների համապատասխան կարգավորումները՝ համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2015 թվականի «Ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին» որոշման: Նախագիծը նախատեսում է նաեւ թարմացնել Եվրասիական տնտեսական միության ապրանքների ծածկագրերի ցանկը:

Նոր կարգավորումը թույլ կտա ներմուծել նյութեր, որոնք հատուկ փաթեթավորված են եւ նախատեսված են սննդի, ջրի, օդի, եւ անվտանգության վերահսկման, միջլաբորատոր համեմատության թեստերի, ինչպես նաեւ գիտական հետազոտությունների նպատակով:

Նախագծի ընդունման արդյունքում կստեղծվի անհրաժեշտ իրավական միջավայր, որը հնարավորություն կտա ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը արտոնագրել այդ ապրանքների ներմուծումը՝ սահմանված քանակներով, ինչը կնպաստի լաբորատոր հետազոտությունների արդյունավետությանը եւ ստանդարտացման գործընթացների բարելավմանը:

ԷԼԵԿՏՐԱԾԱՐԺԻՉՈՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն տեղեկացնում է, որ ներկայումս քննարկման փուլում է գտնվում ԱՏԳ ԱԱ 8703 80 000 2 ծածկագրի ներքո դասվող էլեկտրաշարժիչով շարժիչային տրանսպորտային միջոցների 0 տոկոս ներմուծման մաքսատուրքի դրույքաչափի 2025 թվականի քվոտայի բաշխմանը վերաբերող նախագիծը, որն ըստ էության տարածվելու է նոր՝ 2022 թվականի դեկտեմբերի 31-ից հետո, թողարկված էլեկտրաշարժիչով շարժիչային տրանսպորտային միջոցների վրա:

Հաշվի առնելով վերը նշվածը, ինչպես նաեւ մաքսային մարմնի պահպանության համար լրացուցիչ ֆինանսական ծախսերից խուսափելու նպատակով՝ ՊԵԿ-ը հորդորում է քաղաքացիներին եւ կազմակերպություններին՝ այս տարի ներմուծված եւ մինչեւ 2022 թվականի դեկտեմբերի 31-ը թողարկման տարեթիվ ունեցող էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցներն անմիջապես ներկայացնել մաքսային ձեւակերպման եւ չսպասել 2025 թվականի ընթացքում ձեւակերպելուն, քանի որ 2025 թվականի ընթացքում 0 տոկոս ներմուծման մաքսատուրքի դրույքաչափի քվոտան տարածվելու է միայն 2022 թվականի դեկտեմբերի 31-ից հետո թողարկման տարեթիվ ունեցող էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՇՈՒԿԱ

ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՆՎԱԶՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԿԱՅՈՒՆ ԳՆԱՃԻ ՖՈՆԻՆ

2024 թվականի հոկտեմբերի 21-ից նոյեմբերի 4-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի ֆոնդային շուկան դրսեւորել է խառը դինամիկա: Telecom Armenia-ի բաժնետոմսերը նշված ժամանակահատվածում նվազել են 2,1%-ով՝ հասնելով ոչտմական նվազագույնին՝ 191 դրամ/բաժնետոմսի համար, ինչը 8,1%-ով ցածր է տարեսկզբի մակարդակից: Մյուս կողմից, «ԱԿԲԱ» բանկի բաժնետոմսերը նշված ժամանակահատվածում աճել են 0,7%-ով՝ երկրի բանկերի վարկանիշի հրապարակման ֆոնին, որում այս տարվա 9 ամիսների արդյունքներով ACBA-ն զբաղեցրել է չորրորդ տեղը զուտ շահույթով, իսկ երրորդը՝ վարկային պորտֆելով:

Եռամյա կորպորատիվ պարտատոմսերի գների ինդեքսն աճել է 0,1%-ով, թեեւ, ընդհանուր առմամբ, մնում է աննշան ճնշման տակ սեպտեմբերին մեթոդաբանության վերանայումից հետո՝(0,3%), չնայած տնտեսության ցածր տեմպերին: ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյանը վերջերս կատարած մեկնաբանությունում նշել է, որ վարկավորման տոկոսադրույքները չեն արձագանքում վերաֆինանսավորման տոկոսադրույքի նվազմանը, եւ դրա պատճառը նշել է «վարկային ապրանքների նկատմամբ մեծ պահանջարկը»:

Տնտեսական նորություններ

2024 թվականի հոկտեմբերի 21-ից նոյեմբերի 4-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի վիճակագրական կոմիտեն հրապարակել է երկրում գնաճի եւ տնտեսական ակտիվության տվյալները: Վերջինս մատնանշեց աճի արագացում՝ դրա սառեցման ակնկալիքների փոխարեն եւ կարող է չափավոր դրական ազդանշան դառնալ երկրի տնտեսության կարճաժամկետ սպասումների վերաբերյալ: Ավելին, երկրի Կենտրոնական բանկը նվազեցրեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը եւս 0,25 բազիսային միավորով, եւ մենք ակնկալում ենք հավելյալ նվազում, սակայն բազային սցենարով մենք ակնկալում ենք եւս մեկ նվազում 2025 թվականի սկզբին:

Սեպտեմբերին Հայաստանում տնտեսական ակտիվությունն աճել է սպասվածից ավելի ուժեղ՝ տարեկան 7,0%-ով՝ օգոստոսի 3,5%-ի դիմաց: Սպասվածից ավելի ուժեղ տվյալները վկայում են տնտեսության դրական միտումների մասին, եւ շարունակական թափը կարող է հանգեցնել այս եռամսյակի եւ 2024 թվականի համար ՀՆԱ-ի պոտենցիալ աճի ակնկալիքների վերանայման: 2024 թվականի ինն ամիսների վիճակագրությունը ցույց է տվել 8,7% աճ՝նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

ՀՀ կենտրոնական բանկը նվազեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով մինչեւ 7,25%, ինչպես եւ մենք սպասում էինք: Վերջին կրճատումը պետք է օգնի արագացնել գնաճը եւ աջակցել երկրում տնտեսական ակտիվությանը: Պարտատոմսերի շուկայական եկամտաբերության վրա ճնշումն ավելի հավանական է միջնաժամկետ/երկարաժամկետ կտրվածքով՝ կարճաժամկետ կտրվածքով տոկոսադրույքների կրճատման նկատմամբ ցածր զգայունության պատճառով:

Իսկ երկրի ֆինանսական հատվածում ներդրումային ակտիվության վրա հնարավոր դրական ազդեցությունը, հավանաբար, սահմանափակ կլինի, քանի որ անշարժ գույքի ներդրումները շարունակում են ավելի մեծ հետաքրքրություն առաջացնել: Կենտրոնական բանկը նաեւ նվազեցրել է տարվա նպատակային գնաճի մակարդակը՝ 4.0%-ից մինչեւ 3.0%, ասել է ԿԲ ղեկավար Մարտին Գալստյանը:

Երկրի հոկտեմբերի CPI-ն, որը հրապարակվել է սեպտեմբերի 5-ին, ցույց է տվել գնաճի անփոփոխ մակարդակ՝ +0,6% տարեկան կտրվածքով՝ ամսական մի փոքր արագանալով հոկտեմբերին՝ 0,3% ամսականով (սեպտեմբերի +0,2% ամսականի դիմաց):

Արտահանման աճը սեպտեմբերին կրկին գերազանցել է ներմուծմանը, սակայն արտաքին առեւտուրն ամեն ամիս սառչում է: Արտահանումը տարեկան կտրվածքով աճել է 38.9%-ով, սակայն նվազել է ամսական 13.1%-ով, իսկ ներմուծումն աճել է տարեկան 11.9%-ով եւ նվազել ամսական 12.9%-ով: Ընդհանուր առմամբ, զուտ արտահանման միտումների էական եւ/կամ կառուցվածքային փոփոխություններ չկան, ինչն արտահայտվում է երկրի արժույթի կայունությամբ:

ԲԱՆԿԱՅԻՆ Գ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ». ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի նոյեմբերի 28-ին գումարվելու է «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով՝ համատեղ ներկայության կարգով, իրական ժամանակի ռեժիմում Zoom հավելվածի միջոցով:

Մասնակիցների գրանցումը՝ Երեւանի ժամանակով սկսած ժամը 14:00-ից, ժողովի անցկացման սկիզբը՝ ժամը 14:05:

unibank.am | +374 10 71 22 22, +374 10 59 55 55

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

«ՖԱՍԹ» ԲԱՆԿԻ ՔԱՐՏԱՊԱՆՆԵՐԸ ԿՕԳՏՎԵՆ Google Pay–ԻՑ

«Ֆասթ» բանկի քարտապաններն այսուհետ կարող են օգտվել Google Pay անհպում վճարման ծառայությունից: Google Pay վճարային համակարգը հնարավորություն է տալիս քարտապաններին իրենց ֆիզիկական քարտերը վերածել թվային քարտերի եւ Android հեռախոսների, WearOS-ի (Սմարթ ժամացույցներ) միջոցով անհպում ֆինանսական գործարքներ իրականացնել ոչ միայն առեւտրի եւ սպասարկման կետերում, այլեւ համացանցում եւ հավելվածներում:

«Ֆասթ» բանկի քարտապանները կարող են ներբեռնել Google Wallet հավելվածը, գրանցվել, ապա թվայնացնել իրենց բանկային քարտը, մեկ հպումով ակտիվացնել Google Pay-ը եւ կատարել վճարումներ բիոմետրիկ նույնականացմամբ, որն ավելի ապահով ու անվտանգ է, քան PIN կոդի գործարկումը: Հավելվածում հնարավորություն կա կցել նաեւ հավատարմության քարտեր, ինքնաթիռի նստեցման կտրոններ եւ միջոցառումների տոմսեր:

Google Wallet-ի փոխնախագահ եւ գլխավոր տնօրեն Ջենի Չենգի խոսքերով Google Pay-ով վճարումներ կատարելն ավելի անվտանգ է դարձնում քարտապանների ֆինանսական տվյալները. «Ուրախ ենք, որ Google Wallet-ի հնարավորությունները հասանելի են դառնում ավելի շատ մարդկանց: Google Wallet-ը մի քայլ առաջ է՝տվյալների արտահոսքի, ինֆորմացիայի պահպանման եւ անվտանգության առումով», - ասել է նա:

Google Pay-ն աշխատում է անվտանգության մի քանի մակարդակների կիրառման միջոցով եւ ներառում է ոլորտի չափանիշներին համապատասխանող թոքենիզացիա՝ գործարքները կատարվում են թվայնացված քարտի համարով (token-ով): Թոքենների անվտանգության դինամիկ կոդը փոխվում է յուրաքանչյուր գործարքի հետ՝ լրացուցիչ ապահովություն ստեղծելով քարտապանների համար: Ի հավելումն սրան, եթե օգտատիրոջ բջջային հեռախոսը երբեւէ կորի կամ հափշտակվի, նա կարող է օգտվել «Գտնել իմ սարքը» հնարավորությունից, որը թույլ է տալիս ցանկացած վայրից անմիջապես արգելափակել սարքը, նոր գաղտնաբառ գործարկել կամ հեռացնել անձնական տվյալները, ըստ օգտատիրոջ հայեցողության:

«Ֆասթ» բանկի թողարկած «Ակն» քարտերը Google Wallet-ին կցելու համար անհրաժեշտ է ներբեռնել հավելվածը:

«Ֆասթ» բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 աշխատանքային գրաֆիկով ներկայացված է Հայաստանի բոլոր մարզերում, գործում է նաեւ բանկի հավելվածը: «Ֆասթ» բրենդն այս տարի տոնել է ստեղծման 30-ամյակը:

«Ֆասթ» բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԱՌՆՈ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, ՈՐ ԽՈՍՈՒՄ Է ՍՐՏԻ ՀԵՏ

Հայ ազգում կան այնպիսի դեմքեր, որոնց շնորհիվ ճանաչում են հային: Այդ դեմքերից մեկը Առնո Բաբաջանյանն է, ում թե՛ տեսքից, կեցվածքից, թե՛ երաժշտական նոտաներից հայկականություն է կաթում:



Բաբաջանյանի երաժշտությունը այնպիսի մոգական զգացողություններ է առաջացնում ունկնդիրների մոտ, որ կարծես ականջներից մեղր է հոսեցնում:

Հայ երգահան Առնո Բաբաջանյանը, ով զգացմունքային եւ յուրահատուկ երաժշտական ոճով է ամենից շատ աչքի ընկնում, անկեղծ եւ անմիջական բնավորության տեր մարդ էր:

Մեծանուն երգահանը ոչ միայն հայտնի է Հայաստանի Հանրապետությունում, այլեւ ամբողջ աշխարհում:

Երեկ մեծ երգահանի հիշատակի օրն էր: ArmLur.am-ը ներկայացնում է սիրված կոմպոզիտորի կյանքից հետաքրքիր դիպվածներ:

Երբ Բաբաջանյանը ուսանում էր Մոսկվայի կոնսերվատորիայում, նա հաճախ աշխատում էր մինչեւ ուշ գիշեր, ընդ որում՝ նրա տունը բավականին հեռու էր, եւ Բաբաջանյանը ստիպված էր երկար ճանապարհ անցնել՝ տրանսպորտային միջոցով հասնելու համար: Մի անգամ նա այնքան էր տարվել ստեղծագործությամբ, որ մոռացել էր ժամանակի մասին եւ հայտնվել վերջին մետրոյից դուրս: Առանց երկար-բարակ մտածելու՝ Բաբաջանյանը սկսեց քայլել մինչեւ տուն, եւ այդ ամբողջ ճանապարհին նա հորինեց մի մեղեդի, որը հետագայում դարձավ նրա հայտնի ստեղծագործություններից մեկը:

Բաբաջանյանի կյանքում ընկերությունն ու հարաբերությունները մեծ դեր ունեին, մասնավորապես, նրա մտերիմ կապը ռուսական մշակույթի մեծերի հետ, ինչպիսիք էին՝ Անդրեյ Պետրովը եւ Մուսլիմ Մագոմաեւը: Ընկերությունը վերջիններիս հետ նպաստեց նրա երաժշտական ոճի զարգացմանը՝ բերելով նոր գույներ եւ ազդեցություններ, որոնք փոխանցվում էին իր ստեղծագործություններին:

Բաբաջանյանի երիտասարդ տարիների մասին մեկ այլ հետաքրքիր պատմություն կա: Երբ երգահանը մասնակցում էր Խորհրդային Միությունում անցկացվող երաժշտական մրցույթներից մեկին, նրան առաջարկեցին մրցույթին ներկայացնել ոչ թե հայկական ստեղծագործություն, այլ այնպիսի մի երաժշտություն, որը ուներ ավելի «ընդունելի» կամ ոչ ազգային բնույթ ունեցող ոճ: Բայց Բաբաջանյանը, լինելով մեծ հայրենասեր, չհամաձայնեց այդ առաջարկին: Նա պնդեց, որ պետք է հանդես գա հայկական մեղեդիով եւ հայ ժողովրդական երաժշտության տարրեր պարունակող գործով, քանի որ նա ուզում էր իր ստեղծագործությունների միջոցով աշխարհին ներկայացնել իր ազգային արմատները: Նրա համարձակությունն ու հավատարմությունը իր ազգային ինքնությանը մեծ տպավորություն թողեցին կազմակերպիչների վրա եւ արդյունքում նա մրցույթում ունեցավ մեծ հաջողություն:

Բաբաջանյանը դեռ երիտասարդ տարիքից էլ աչքի է ընկել իր վճռականությամբ, անձնուրաց հայրենասիրությամբ, հավատարիմ սկզբունքներով, այդպիսով ցույց տալով նաեւ իրական հայի կերպարը:

Երաժշտությունն ու Բաբաջանյանը հոմանիշներ են. եթե երաժշտությունը չլիներ Բաբաջանյանի ֆենոմենը, գուցե եւ չլիներ Բաբաջանյան հանճարը:

Մի առիթով Առնո Բաբաջանյանը երաժշտություն է գրել իր ընկերոջ՝ բանաստեղծ Եվգենի Եվտուշենկոյի համար: Նրանք միասին ստեղծել են մի երգ, որի ամբողջ գործընթացն անցել է բավականին ջերմ եւ ընկերական մթնոլորտում: Սակայն հետաքրքիրն այն է, որ երբ երգի վերջնական տարբերակը պատրաստ է եղել, Բաբաջանյանը կտրուկ վեր է կացել տեղից եւ ասել, որ չի կարող աշխատել այդ երգի վրա, քանի որ իրեն այն դուր չի գալիս, իսկ Եվտուշենկոն, ով շատ էր հուզված գործից, շփոթված էր Բաբաջանյանի արձագանքից:

Բաբաջանյանն այնքան անկեղծ էր ու պահանջկոտ իր աշխատանքի հանդեպ, որ առանց վարանելու հայտարարում էր իր կարծիքը, նույնիսկ եթե այն կարող էր հիասթափեցնել գործընկերներին: Այս պատմությունը Բաբաջանյանի յուրահատուկ բնավորության ապացույցն է. նա մշտապես ձգտում էր կատարելության, եւ եթե զգում էր, որ ինչ-որ բան կարող է ավելի լավ լինել, նա պատրաստ էր նորից սկսել եւ հասնել ցանկալի արդյունքի:

Պատահական չէ, որ Բաբաջանյանն ասել է՝ «հեղինակ լինելու համար պետք է լինել ազնիվ՝ եւ ինքդ քո, եւ երաժշտության հանդեպ»:

Բաբաջանյանական երաժշտությունը բուժիչ է: Եթե ապրում ես հեռավոր մի տեղում, որտեղ հայկական անգամ շունչ չկա, ապա լսելով Բաբաջանյանի երաժշտության ելեւէջները՝ կարող ես մտովի տեղափոխվել Հայաստան, կամ տարածքը, որը հայկական չէ, դարձնել հայկական: Այս առիթով Բաբաջանյանն ասել է. «Իմ նպատակը մեկն է՝ ստեղծել երաժշտություն, որ կխոսի սրտի հետ»:

Անցել են շատ տարիներ, ինչ Առնո Բաբաջանյանը մեզ հետ չէ, սակայն ինչպես հայտնի ասույթն է՝ մարդը կենդանի է այնքան ժամանակ, քանի դեռ հիշում են իր մասին: Բաբաջանյանի մասին հիշում են թեկուզ իր երաժշտության շնորհիվ, եւ այս առթիվ էլ Բաբաջանյանն ասել է, որ «ստեղծագործությունը պետք է լինի այնքան ուժեղ, որ անգամ տարիներ անց այն պահպանվի հիշողություններում»:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԱԿՏԻՎ ՊԱՅՔՄՐ ԿՍԿՍԵՆ

ԳՈՅ ԹԱՏՐՈՆԻ ՀԱՄԱՐ ՆՍՏԱՑՈՒՅՑԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Ինչպես արդեն հայտնի է, Գոյ թատրոնը վերսկսել է նստացույցը:

Գոյ թատրոնի ստեղծագործական անձնակազմը ԿԳՄՍՆ-ից պահանջում է վերականգնել արդարությունը, այն է՝ ստեղծագործել իրենց իսկ թատրոնում, մինչեւ դատարանի եւ իրավապահ մարմինների կողմից հարցի վերջնական լուծումը:

Հիշեցնենք, որ իրենց թատրոնում ստեղծագործելու պահանջով եւս մեկ անգամ անժամկետ նստացույց է եղել, սակայն ԿԳՄՍՆ-ի հետ բանավոր պայմանավորվածություն ձեռք բերելուց հետո՝ նստացույցը դադարեցվել էր:

Նշենք, որ որոշ ժամանակ առաջ էլ դերասաններին հաջողվել էր մուտք գործել իրենց իսկ մայր թատրոն, որտեղ էլ մի քանի օր ստեղծագործական անձնակազմը մնացել է 2 ոստիկանի հետ, սակայն ամեն բան հարթ չի անցել. Սունդուկյան թատրոնը թույլ չի տվել սնունդ տանել թատրոն:

Հարկ է նշել, որ այժմ նստացույցի մասնակիցները անգամ գիշերում են դրսում:

Հիշեցնենք՝ Գոյ թատրոնի 23 դերասաններ դիմել էին ՀՀ վարչական դատարան՝ ընդդեմ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության՝ պահանջելով ԿԳՄՍ նախարարության գործողությունները, եւ որպես հետեւանք՝ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից սույն թվականի հունվարի 30-ին Օրենքի 45-րդ հոդվածով սահմանված կարգով կատարված կազմակերպությունների «ԱՐՄԵՆ ՄԱՋՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲԵՄԱՐՎԵՍՏԻ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ «ԳՈՅ» ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ «Գ. ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ միացման ճանապարհով վերակազմակերպմամբ պայմանավորված պետական գրանցումները ոչ իրավաչափ ճանաչել:

Ա. ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀՖՖ-Ն ԱՐՁԱԳԱՆՔԵԼ Է ՖԱՆ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐԻՆ

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան հայտարարություն է տարածել՝ անդրադառնալով ֆան ակումբների մեղադրանքներին:

«Հարգելի՛ երկրպագուներ, առջեւում Հայաստանի ազգային հավաքականի հանդիպումներն են: Նոյեմբերի 14-ին մեր ընտրանին կիյուրընկալի Ֆարերյան կղզիների հավաքականին, իսկ նոյեմբերի 17-ին մրցակցի հարկի տակ կհանդիպի Լատվիայի թիմին:

Չկա ավելի կարեւոր բան, քան ազգային հավաքականը: Ուստի կոչ ենք անում բոլոր երկրպագուներին գալ մարզադաշտ եւ, ինչպես միշտ, աջակցել Հայաստանի ազգային հավաքականին Ֆարերյան կղզիների ընտրանու դեմ տնային խաղում:

Ինչ վերաբերում է երկրպագուական շարժումների՝ տոմսերի վերաբերյալ հայտարարությանը, ապա պետք է նշել, որ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից նրանց հանդեպ չկա որեւէ խոչընդոտ տոմսերի ձեռքբերման հարցում: Նրանց համար նախատեսված տոմսերը, ինչպես միշտ, ամրագրված են տոմսերի վաճառքի օնլայն հարթակում եւ հասանելի կլինեն այսօր՝ սկսած 15:00-ից:

Կոչ ենք անում բոլոր կողմերին զերծ մնալ այս թեմայի շուրջ ցանկացած տեսակի շահարկումներից»,- ասված է հայտարարության մեջ:

ՇԱԽՄԱՏԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ներկայացնող շախմատիստներն ավարտեցին ելույթները Բրազիլիայի Ֆլորիանոպոլիս քաղաքում կայացած շախմատի աշխարհի մինչեւ 18 տարեկան պատանիների եւ աղջիկների առաջնությունում:

Մինչեւ 18 տարեկան պատանիների խմբում Ալեքս Սահակյանը 11 հնարավորից վաստակեց 7 միավոր եւ զբաղեցրեց 12-րդ հորիզոնականը: Այս տարիքային խմբում Արսեն Դավթյանը վաստակեց 6.5 միավոր եւ զբաղեցրեց 23-րդ հորիզոնականը:

Մինչեւ 14 տարեկան աղջիկների խմբում Սոնա Կրկյաշարյանը վաստակեց 7 միավոր եւ զբաղեցրեց 16-րդ հորիզոնականը:

Մինչեւ 14 տարեկան պատանիների խմբում Գոռ Ասկանազյանը վաստակեց 6 միավոր եւ զբաղեցրեց 47-րդ հորիզոնականը:

ՌՈՒՍ ՄԱՐԶՈՒՀԻՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐՈՇԻ ՆԵՐՔՈ

Ռուսաստանի հավաքականի կազմում խմբային վարժություններում ռիթմիկ մարմնամարզության աշխարհի 2014 թվականի չեմպիոն Ալեքսանդրա Սեմենովան միջազգային մրցումներին պատրաստվում է ներկայանալ Հայաստանի դրոշի ներքո:

Այս մասին ՏԱՍՍ-ին հայտնել են 26-ամյա մարզուհու մայրն ու մարզիչը՝ Վիկտորյա Թեքելը:

● *Նոյեմբերի 25-ին՝ ժամը 19:30-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում կցուցադրվի «Art փսիխոզ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2.000-8.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ավտոապահովագրողների բյուրոն ո՞ր դեպքում է հատուցում տուժած անձանց պատճառված վնասները:

Արամ Հարությունյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ռ. Հարությունյանի հարցին ի պատասխան՝տեղեկացնում ենք, որ բյուրոն Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին հատուցում է տուժած անձանց պատճառված վնասները, եթե՝

- վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքելու պարտականություն ունեցող անձն անհայտ է: Այս դեպքում Բյուրոն Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին հատուցում է միայն տուժած անձանց պատճառված անձնական վնասները:
- Վնասը պատճառվել է այն ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ, որի վերաբերյալ կնքված չէ ԱՊՊԱ պայմանագիր:
- Վնասը պատճառվել է հափշտակված կամ առանց հափշտակության նպատակի ապօրինաբար տիրացած ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ:
- Վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությունը ճանաչվել է անվճարունակ (սնանկ), եթե նա, օրենքի համաձայն, պարտավոր էր հատուցել պատճառված վնասը:

Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ երաշխավորման ֆոնդը գոյանում է Բյուրոյի անդամների կողմից կատարվող միանվագ, պարբերական եւ լրացուցիչ վճարներից, օրենքով սահմանված այլ ձեւերով ներդրված միջոցներից, ինչպես նաեւ այն ակտիվներից, որոնցում ներդրվել են դրանք, եւ դրանց կառավարման արդյունքում ստացված եկամուտներից: Երաշխավորման ֆոնդի միջոցները սեփականության իրավունքով պատկանում են Բյուրոյին: Դրանք կարող են օգտագործվել բացառապես Երաշխավորման ֆոնդի համար օրենքով սահմանված նպատակներով եւ դեպքերում:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչպես է որոշվում բնակելի տարածության անհատույց օգտագործման իրավունքի՝ դատական կարգով դադարեցման դեպքում սեփականատիրոջ կողմից վճարվող փոխհատուցման չափը:

Անաստաս Միքայելյան (43 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ փոխհատուցման չափը մեկ ամսվա համար սահմանվում է իրավունքի դադարեցման պահին տվյալ բնակելի տարածության համար կիրառելի վարձավճարի չափից՝ հաշվարկված հետեւալ կերպ. յուրաքանչյուր բնակության իրավունք գրանցած անձի համար՝ բնակելի մակերեսի չափը բնակելի տարածության անհատույց օգտագործման իրավունք ունեցող անձանց եւ սեփականատերերի ընդհանուր թվի վրա բաժանելու միջոցով ստացված մակերեսը, սակայն ոչ պակաս 5 քառակուսի մետրից եւ ոչ ավելի, քան 9 քառակուսի մետրը: Փոխհատուցումը հաշվարկվում է երեք տարվա համար եւ տրամադրվում է միանգամից, եթե կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ: (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդված):

Կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Գրավ դրված բնակելի տան կամ բնակարանի վրա բռնագանձում տարածելուց եւ այդ գույքն իրացնելուց հետո գրավատուն ու բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեցող անձինք տան (բնակարանի) սեփականատիրոջ պահանջով պարտավոր են ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում ազատել զբաղեցրած բնակելի տարածությունը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝համացանցից

Մոնտենեգրոյում անցկացվող շախմատի Եվրոպայի անհատական առաջնությունում Ռոբերտ Հովհաննիսյանն առաջատարներից է:

Մրցաշարին մասնակցում է 170-ից ավելի շախմատիստ. առաջնությունը կեզրափակվի նոյեմբերի 19-ին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	0 - 4 + 8 + 12
Կոտայքի լեռներ	-1 - 5 + 7 + 11
Կոտայքի նախալեռներ	0 + 2 +13 + 15
Գեղարքունիք	0 - 5 + 6 + 11
Լոռի	-1 - 5 +10 + 13
Տավուշ	- 2 + 3 +12 + 15
Արագածոտնի լեռներ	0 - 3 + 7 + 11
Արագածոտնի նախալեռներ	-1 + 3 +11 + 15

Արարատ	0 + 3 +17 + 19
Արմավիր	-1 + 2 +17 + 19
Վայոց ձորի լեռներ	-2 - 5 + 9 + 11
Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +17 + 19
Սյունիքի հովիտներ	+ 3 + 7 +16 + 19
Սյունիքի նախալեռներ	0 - 2 + 9 + 12
ԼՂՀ	0 - 4 + 9 + 13
Երեւան	+ 6 + 8 + 16 + 18

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **11.11.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*